

Ժամի դէմ ու մնացեր են կիսանկախ՝ դաշտալիններու նման
չենթարկուելով Թիւրք իշխանութեան:

Հայերու ու Քիւրդերու մէջ ընդհանուր բաժանումը ընդ-
հանրապէս այն ժամանակ տեղի կ'ունենայ, երբ Հայերը կը
տաժեն ընդհանուր ազգայնական դադափար, ու մանաւանդ
երբ սկիզբն կ'առնէ Թիւրք պետութեան ընդհանուր բարե-
կարգութեան հարցը, հայերը ամեն տեղէ կը կամենան իրենց
ազատել նախնական իշխանութեան հին ձեւերէ ու փոքր փոքր
դաշնակցութիւններէ, ու կը մանեն ընդհանուր պետութեան կազ-
մին մէջ՝ իբր անոր բարեկարգ և ազատ մի մաս:

Քիւրդերը որոնք միշտ յարած կը մնան աւանդական իշ-
խանութեան, Հայերու այդ բաժանումը կը համարեն իրենց
համար տկարացումն ու Հայերու կողմէ դաւաճանութիւն ու
թշնամութիւն: Առիթը կը ներկայանայ և թշնամութիւնը
կ'արտայայտուի աւելի ուժեղ ու շատ խիստ:

Պարզենք թէ ինչպէս Քիւրդը ստացաւ թալանողի ու Հայը
թալանուողի անունը. և ինչպէս թալանող հայն ալ դարձաւ
թալանուող:

— Հայերը զարգանալով քաղաքակրթութեան շաւղին
մէջ, աստիճանաբար հեռացան թալանելու վայրերի ու հին
սովորութենէն, որ պատերազմով հարստանալու հին անտեսա-
կան դրութեան նախնական ձեւն էր, ու սկսելով աշխատանքի
դիմելու ու արդիւնաբերութեան, թէև չը հարստացան շատ,
բայց եղան ունեւորներ. իսկ Քիւրդը մնալով սարերը ու թա-
լանելու արուեստի ու անոր անտեսութեան մէջ, բնական էր
որ այդ չունեւորը խլէր այն ունեւորէն՝ որմէ պատժուելու
վախ չ'ունէր:

Առաջ կը բերեմ այս մասին Քիւրդերու տեսակէտը: Ասկէ
18 տարի առաջ ծերունի 100 տարեկան Քիւրդ Բահրամ բէգը
ինձ պատմեց (*):

(*) Բահրամ բէգը Մոկսի Քիւրդ իշխողներէն էր, որ մասնակցեր էր
Քրդական շատ պատերազմներու, ինչպէս և Պէտիր-խան բէգի կռիւ-
ներուն: